ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ԿՅԱՆՔՍ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀՈԳԻՍ՝ ԱՍՏԾՈՒՆ, ՊԱՏԻՎՍ՝ ԻՆՁ

Թիվ 3(18), 29 ապրիլի, 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրերով Ոստիկանության օրվա առթիվ իրավակարգի ամրապնդման, հասարակական կարգի պահպանության գործում ներդրած ավանդի և ծառայության ընթացքում ցուցաբերած նվիրումի համար ոստիկանության մի խումբ ծառայողներ արժանացել են պատվավոր կոչման ու պետական պարգևների:

Ապրիլի 15-ին ՀՀ նախագահական նստավայրում տեղի ունեցավ պարգևատրման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը և ՀՀ ոստիկանության կոլեգիայի անդամները: Պարգևատրվողների թվում էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գագիկ Գևորգյանը, որին Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից հանձնվեց Երախտագիտության մեդալ:

Շնորհավորում ենք բոլոր պարգևատրվածներին և մաղթում շարունակական վերելքներ ու աշխատանքային նորանոր ձեռքբերումներ:

ՔՈԼԵՋԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում ոստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագրով իրականացվող ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու, կրթական ծրագրի չափորոշիչը վերանայելու և բարելավելու նպատակով 2019թ. մարտի 29-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ հանդիպում քոլեջի տարբեր տարիների 8 շրջանավարտների հետ, որոնք ունեն համայնքային ոստիկանի աշխատանքային փորձ: Հանդիպմանը ներկա էին Կրթահամալիրի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական, քոլեջի տեսչական, կրթության որակի ապահովման բաժանմունքի անձնակազմը և քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի 1-ին և 2-րդ կուրսի սովորողները:

Շրջանավարտներից յուրաքանչյուրը (Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստ. կապիտան Լ. Եսայան, Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Գ. Հայրապետյան, Երևան քաղաքի վարչության Էրեբունու ՀՈԲ տեսուչ, ոստ. կապիտան Տ. Մարաբյան) նախ՝ շնորհակալություն հայտնեց քոլեջի ղեկավարությանը՝ իրենց հրավիրելու համար, ապա՝ ելույթներում նշեցին, որ Կրթահամալիրի քոլեջում ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր առարկայից և մոդուլից ձեռք բերված գիտելիքները չափազանց կարևոր են պրակտիկ գործունեության ընթացքում: հատկապես մեծ գնահատանքի արժանացրին այն առարկաներն ու դասաժամերը, որոնց պրակտիկ մասը միշտ գերակշռել է:

Հանդիպման ավարտին շրջանավարտները սովորողներին խորհուրդ տվեցին զինվել գիտելիքներով, ուսումնառության ընթացքում կարևորել ոչ միայն զուտ մասնագիտական առարկաները, այլ նաև լեզուները՝ հայոց լեզու, ռուսերեն և անգլերեն, երբեք չանտեսել ֆիզիկական պատրաստվածությունը, իսկ քոլեջի ղեկավարությանն առաջարկեցին հետամուտ լինել, որ ուսումնական ու նախապետական պրակտիկայի սովորողներին ուղղորդեն առավել հմուտ, փորձառու և բանիմաց ծառայողներ՝ այն ավելի կազմակերպված, նպատակային ու արդյունավետ դարձնելու համար:

Վերջում Կրթահամալիրի ղեկավարությունը շնորհակալություն հայտնեց շրջանավարտներին, նրանց մաղթեց հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ իրենց մասնագիտական առաքելության մեջ:

ԱՊՐԻԼԻ 16-ԸՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ որպես երկրի պետականաստեղծ կառույցներից ու հիմնասյուներից մեկը, որը դարից ավելի ծառայում է իրավակարգի և քաղաքացու պաշտպանության առաջնագծում, ապրիլի 16-ին հպարտության, արժանապատվության, պատասխանատվության զգացումով նշեց իր մասնագիտական տոնը՝ Ոստիկանի օրը:

ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորությամբ՝ ոստիկանության կոլեգիայի անդամները, բարձրաստիճան սպաները, վետերաններն ու հյուրերն առավոտյան ծաղկեպսակներ ու ծաղիկներ խոնարհեցին Արամ Մանուկյանի և Իրավակարգի զինվորի հուշարձաններին՝ հարգանքի տուրք մատուցելով ոստիկանության համակարգի հիմնադիր գործիչներին և ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինակիցներին: Ոգեկոչման արարողությանը հաջորդեց ՀՀ ոստիկանության պատվո պահակախմբի ցուցադրական ելույթը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի և Արցախի հանրապետությունների տարբեր գերատեսչությունների, զինված ուժերի, իրավապահ մարմինների ղեկավարներ, բարձրաստիճան սպաներ, հյուրեր: Տոնական օրը շարունակվեց հանդիսավոր նիստով:

Ոստիկանության անձնակազմին տոնի առթիվ շնորհավորանքի խոսք հղեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այնուհետև պետական պարգևներ հանձնեց խրախուսանքի արժանացած ոստիկանության մի խումբ ծառայողների:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը շնորհավորանքի ջերմ խոսք հղեց ոստիկանության ծառայողներին, վետերաններին, ոստիկանական ընտանիքներին:

Ոստիկանության օրվան նվիրված հանդիսություններն ամփոփվեցին Ոստիկանության զորքերի պատվո պահակախմբի և նվագախմբի հանդիսավոր երթով մայրաքաղաքի փողոցներով, Հյուսիսային պողոտայում կազմակերպված ֆլեշ-մոբով, Հանրապետության հրապարակի ցուցադրական ելույթով ու Ազատության հրապարակում տոնական համերգով:

ԿՈՉՄԱՆԸ ՄԻՇՏ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Հայրենիքին ծառայելը, հիրավի, փառք է և մեծապատիվ հարգանք այն նվիրյալներին, որոնք հայրենի երկրի արժանի զավակներն են և ունեն մեկ ընդհանրություն՝ սիրում են իրենց երկիրը, անձնվիրաբար պահում և պաշտպանում այն: Նրանք մեր ոստիկաններն են՝ օրենքի և օրինականության երաշխավորները:

Անկեղծ լինենք և ասենք, որ բարդ և դժվարին մասնագիտություն են ընտրել, կյանքի համար վտանգավոր, բայց միևնույն ժամանակ պատվավոր: Ունեն կենսագրություն և անցած ուղի, գործին նվիրված են, հավատարիմ՝ ընտրած մասնագիտությանը, գիտեն հաղթահարել դժվարությունները և անձնական օրինակով սեփական զավակներին հերթափոխը հանձնել գիտեն:

Ոստիկանությունում «հայրերորդիներ» խնդիրն այլ խորհուրդ ունի. իրականում խնդիր չէ, այլ հոգու պարտադրանք: Հայրերի խորհրդավոր համազգեստը ձգող ուժ ունի, որդիներին իրենով անել գիտի: Ոստիկան լինելն ու համազգեստ կրելը տարիների հետ դառնում է ընտանեկան ավանդույթ:

Ընտանեկան դինաստիայի վառ օրինակ է ոստիկանության ավագ սերժանտ Անդրանիկ Կիրակոսյանի ընտանիքը: Ծնունդով արծվաշենցի Անդրանիկ Կիրակոսյանը շուրջ 25 երկարուձիգ տարիներ ծառայել է ՆԳՆ համակարգում: Ավտոճանապարհային տեխնիկումն ավարտելուց հետո ծառայության է անցել Երևան քաղաքի ՆԳ վարչության պետավտոտեսչությունում, որտեղ ծառայել է մինչև թոշակի անցնելը: Միլիցիոներ դառնալը նրա համար գերագույն նպատակ էր: Երազանքին հասնելու համար հաղթահարել է բազմաթիվ դժվարություններ, երբեք չի ընկրկել և հուսահատվել, անտրտունջ առաջ է ընթացել: Գործընկերները նրան «Անդրանիկ փաշա» են ասել: Պատճառը ոչ միայն մեծ զորավարի հետ արտաքին նմանությունն էր, այլ նաև զինվորական կեցվածքը, զինվորականին վայել կարգապահությունը: Անչափ կարևորել է իր գործը և միշտ բարձր է պահել համազգեստի պատիվը: Նա իր ժամանակի մեջ եղել է այն օրինակելի միլիցիոները, ում նվիրվածությանը վստահել և հավատացել են հրամանատարները: Ընտանիքի հոգատար և կենսախինդ հայրը տարիների ընթացքում անգամ չէր էլ նկատել, թե ինչպես էր իր զավակների համար օրինակելի դարձել և տարիներ անց ակամայից նրանց տարել իր ճանապարհով: Անդրանիկ Կիրակոսյանի չորս զավակներից երեքն ընտրեցին հոր դժվար ու վտանգավոր ուղին, ու հիմա ոստիկան կոչվելու հերթափոխը նրանցն է:

Ոստիկանության գնդապետ Կարինե, ոստիկանության փոխգնդապետ Գայանե և ոստիկանության մայոր Արտակ Կիրակոսյանների հայտնվելը ոստիկանությունում պատահական չէր. այդ դաստիարակությունն էին ստացել, գործին ու համազգեստին հոր նվիրվածությունն էր նրանց ուղղորդել, և ոստիկանությունում ծառայելու հերթափոխը գիտակցաբար ու կամովին են ստանձնել:

Կարինե Կիրակոսյանին (ավագ դուստրը) մանկության երազանքը հեշտ չտրվեց: Համառություն, կամք և հետևողականություն պահանջվեց նրանից, նաև անհանգիստ ու դժվարին օրեր եղան, սակայն հաղթահարեց իրեն ուղղված բոլոր մարտահրավերները և շարքայինից մինչև գնդապետ ճանապարհը պատվով անցավ:

Նա ՆԳՆ (ներկայիս ոստիկանության) համակարգում ծառայում է 1983 թվականից: Ավարտելով Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ 1992 թվականին նշանակվել է սպայական պաշտոնի և ծառայել ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում:

Կարինե Կիրակոսյանը եղել է ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնի պետի ուսումնական գծով տեղակալ, ապա՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի պետի տեղակալ, իսկ 2013 թվականից զբաղեցնում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի տեղակալի պաշտոնը:

Շարունակությունը՝ էջ 2

ՃԱՌԱՅԵԼՈՎ ՕՐԵՆՔԻՆ՝ ՃԱՌԱՅՈՒՄ ԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ոստիկանությունն օրինականության խորհրդանիշն է, պետության ու պետականության պահապանը, ժողովրդի անվտանգության երաշխավորը, հավատի և վստահության հիմնասյունը, արդարության հիմքն ու հենքը: Իսկ արդարություն գտնում են այնտեղ, որտեղ կա պատվի ու պարտքի զգացում: Ծառայելով օրենքին՝ ծառայում ենք ժողովրդին. սա է պատգամը, որ շարունակելու ենք անշեղ կատարել՝ ի պատիվ ոստիկանության և ի հեճուկս հանցածին տարրերի:

1918 թ. մայիսին իրականություն դարձավ մեր դարավոր երազանքը՝ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Առաջին հանրապետության կառավարության հռչակած դեկլարացիայի առաջին և ամենակարևոր կետերից մեկն ամրագրում էր՝ հաստատել երկրում տարրական իրավակարգ, ապահովել քաղաքացիների անձի և գույքի անձեռնմխելիությունը: Այս խնդրի իրականացմանն էր կոչված ներքին գործերի նախարարությունը: Ներքին գործերի առաջին նախարար նշանակվեց Արամ Մանուկյանը: 1918 թվականին ստանձնելով ներքին գործերի նախարարության ղեկավարումը՝ նա համոզված էր՝ ուժեղ համակարգն ուժեղ պետության հիմնաքարն է, ուժեղ պետությունը՝ ժողովրդի ապահովության և բարօրության գրավականը:

1920 թվականի ապրիլի 21-ին Հայաստանի պառլամենտի կողմից ընդունվեցին ոստիկանության մասին ժամանակավոր օրենքը և մի շարք ենթաօրենսդրական ակտեր: Այս փաստաթղթերում մասնավորապես ամրագրված էր գավառական և քաղաքային միլիցիայի կազմը: 1920 թ. դեկտեմբերի վերջին ընդունվեց Խորհրդային Հայաստանի միլիցիայի կանոնադրությունը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայատանի ներքին գործերի համակարգի աշխատակիցների ուսերին լրացուցիչ պարտականություններ դրվեցին: Մեծ Հայրենականի տարիներին իրենց անունը փառքով պսակեցին Հայաստանի միլիցիայի համակարգում ծառայող Անդրանիկ Մանուկյանը, Սուրեն Պետրոսյանը, Այդին Հարությունյանը, Սուրեն Առաքելյանը և դարձան Սովետական Միության հերոսներ:

1964 թ. կազմավորվեց ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի Հայաստանի գունդը: Նույն տարում բացվեց միլիցիայի Երևանի հատուկ դպրոցը, իսկ 1965 թ. կազմավորվեց ՆԳՆ շտաբը:

1960-1980-ական թվականներին ներքին գործերի համակարգն արդեն ամուր կառույց էր, որը լիարժեք իրականացնում էր իր առջև դրված խնդիրները:

1990 թվականի մայիսին կազմավորվեց միլիցիայի հակազդման (հետագայում միլիցիայի հատուկ նշանակության) ջոկատը: Դա ժամանակի հրամայականն էր: Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատը ռազմական գործողությունների էր մասնակցում դժվարին ու վտանգավոր հատվածներում, ռազմավարական կարևորության տեղամասերում:

1992 թ. կազմավորվեց ՆԳՆ ներքին զորքերը՝ որպես երկրի կայունության երաշխավոր:

Հայ ոստիկանները, կամավորական ջոկատներին անդամագրված, մասնակցել են մարտական գործողություններին: Նրանցից շատերը զոհվեցին մարտական առաջադրանքներ կատարելիս: Իսկ նրանց գործընկերները թիկունքում շարունակում էին իրականացնել իրենց խնդիրը՝ պայքարը հանցավորության դեմ:

Այսօր անցած տարիների հեռվից հրաշք է թվում հայկական միլիցիայի այդ տարիների սխրանքը: Սահմանափակ թվակազմով, տեխնիկական նվազագույն միջոցներով, սակայն պատվով հաղթահարեցին իրենց առջև ծառացած բոլոր դժվարությունները, քանզի ամեն ինչից վեր էր մարդկային ու մասնագիտական պարտքը, անխախտ էր հավատարմությունը մեկ անգամ և մեկընդմիշտ տրված երդմանը:

2001 թ. ապրիլի 16-ին ընդունվեց «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, 2002 թ. հունիսի 30-ին ընդունվեց « Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը դարձավ ոչ միայն հիմնակետ ներքին գործերի նախարարությունը ՀՀ ոստիկանության վերակազմավորվելու համար, այլև այն առանցքը, որի շուրջ ձևավորվեց ոստիկանական օրենսդրությունը:

Ժողովրդավարական և իրավական երկիր դառնալու ուղին բռնած Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ որպես պետական կառավարման մարմին, առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ համընդհանուր ծրագրերի իրականացմանը:

2012 թվականից մեկնարկեց ոստիկանության գործունեության արմատական բարեփոխման ծրագիրը, և հիմնարար փոփոխություններ կատարվեցին բոլոր ոլորտներում, փոխվեց պայքարի հոգեբանությունը՝ օրենքի տառին հավատարիմ՝ անխնա պայքարել ծանր ու վտանգավոր հանցանքների դեմ:

Ի դեմս հայ ոստիկանի՝ մեր հանրապետությունն ու ժողովուրդն ունեն կայացած, ամուր պետական կառույց: Ոստիկանի վարքն ու դիմագիծն ուղղակիորեն կապվում են երկրի և պետության նկարագրի հետ, և այսօր հարմար առիթ է ընդգծելու, որ ոստիկանությունն իր առաքելությունն իրականացնում է արժանապատվորեն և լիարժեք:

Հայաստանի ոստիկանությունը բարձր պատրաստականությամբ շարունակում է իր գործունեությունը փոփոխությունների, բարելավումների դժվարին ճանապարհով: Այսօր տեղին է նաև նշել, որ հասարակությունը վստահում է ոստիկանին և հավատում կարգ ու կանոնի պահապանի՝ հանցագործությունների դեմ մղվող պայքարում աննահանջ կեցվածքին: Դրականորեն փոխվել է ոստիկան-հասարակություն փոխհարաբերությունը, իսկ դա ամենամեծ ձեռքբերումն է:

Ոստիկանի ծառայությունը միշտ կարող է վերածվել վտանգավոր պայքարի, որովհետև փորձության պահին ոստիկանն է կանգնում քաղաքացու և հանցագործի միջև, կանգնում է իր փորձառությամբ ու կամքով, իր մարդասիրական մասնագիտության պահանջով, իր կյանքով:

Հետևողականորեն իրականացնելով բարեփոխումների ընդգրկուն ծրագիրը՝ ոստիկանությունը կներկայանա որպես արդիական, գործունակ, բոլոր մարտահրավերներին դիմակայելու պատրաստ իրավապահ համակարգ:

Այո՛, ծառայելով օրենքին՝ ծառայում ենք ժողովրդին...

Ասատուր Ասլանյան
կադրերի և ԱՀՏԱ բաժնի ակումբի
կրտսեր տեսուչ, ոստիկանության սերժանտ

ՀԱՍԱՐԱԿ ԵՐԵՎԱՆՑԻ

«Ես բեմում կռիվ եմ տալիս, բեմից դուրս կռիվ եմ տալիս»:

Ապրիլի 1, 1930թ., լույս աշխարհ եկավ հայ մեծ դերասան, հայ կինոյի և թատրոնի կնքահայր Խորեն Աբրահամյանը:

ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների և կինոփառատոնների դափնեկիր Խորեն Աբրահամյանը խորհրդահայ թատրոնի և կինոյի ամենաճանաչված դերասաններից էր:

Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի թատերական ինստիտուտում, որն ավարտել է 1951թ. և ընդունվել Գ.Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոն, որտեղ կատարել է բազմաթիվ դերեր: 1979–1984թթ. եղել է թատրոնի գլխավոր ռեժիսոր, 1988–1995թթ.՝ գեղարվեստական ղեկավար, միաժամանակ՝ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ: 1985–1988թթ. Գյումրիի պետական թատրոնի դերասան էր և գլխավոր ռեժիսորը: 1980–1995թթ. դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Աբրահամյան-կինոդերասանի հաջողությունն սկսվել է 1958 թ. նկարահանված «Առաջին սիրո երգը» կինոնկարում գլխավոր հերոսի՝ Արսեն Վարունցի դերակատարումով: Այն մեծ ընդունելություն է ունեցել, գրեթե բոլորը երգում էին Աբրահամյան-Վարունցի երգերը, որոնց հեղինակը Առնո Բաբաջանյանն է: Բաբաջանյանը ֆիլմի համար գրեց 3 երգ՝ «Երևանի սիրուն աղջիկ», «Իմ Երևան», «Դու իմ սիրո արև», որոնք ֆիլմի ցուցադրումից հետո դարձել են հայ ժողովրդի ամենասիրված երգերից:

Հայկական մի քանի լավագույն կինոնկարների հաջողությունները պայմանավորված են նաև Աբրահամյանի դերակատարումներով՝ Գևորգ («Սարոյան եղբայրներ», 1968 թ.), Ռոստոմ («Տերը», 1968 թ.), Պավլե («Մենք ենք, մեր սարերը», 1969 թ.), Արմեն («Երևանյան օրերի խրոնիկա», 1972 թ.), Մյասնիկյան («Երկունք», 1977 թ.), Տեր Ավետիս («Հուսո աստղ», 1978 թ.), Սիսակյան («Ապրեցե՛ք երկար», 1979 թ.) և այլն: Նա նկարահանվել է նաև Մոսֆիլմի 3 կինոնկարում՝ «Առաջին էշելոնը», «Բարձունք», «Նրա կյանքի նպատակը»:

Իսկ վերջում, ինչպես յուրաքանչյուր ներկայացման ավարտին, փակվում են բեմի վարագույրները, կուլիսներում վարպետը նստած երգում է. «Ի՞նչ ասեմ, գուցե այսքանը, էլ ի՞նչ կար, որ չասացի, հա՜, Օսկար չկա իմ տանը, Լիր արքա չխաղացի, բայց կա դեր, որ ի վերուստ տրված է, նրանով եմ ես ապրել, դեր, որին վերապահված չեն ո՛չ կոչում և ո՛չ ծափերգ ամենից դժվար կերպարը, որ ողջ կյանքս խաղացի. դա Խորեն Աբրահամյանն է՝ հասարակ երևանցի....»:

Մարիետա Խերանյան
գիտական աշխատանքների բաժնի
գիտաշխատող,
ոստիկանության ավագ լեյտենանտ

Սկիզբը՝ էջ 1

ԿՈՉՄԱՆԸ ՄԻՇՏ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Համակարգը, գործընկերները, ընտանիքը, երեխաներն՝ իր կյանքի ամենակարևոր ձեռքբերումներն են և մարմին առած երազանքները: Նրա կամային հատկանիշները զուգակցվում են նուրբ խառնվածքին, բարությանը, ինքնուրույնությանն ու հուսալիությանը: Նա իր մասին ասում է. «Ես իմ հոր արժանի զավակն եմ, իմ զավակն էլ գերդաստանիս արժանի հետնորդն է»:

Լիրիկական նուրբ հոգու տեր ոստիկանը նաև ստեղծագործում է: Նրա ստեղծագործությունների լեյտմոտիվը հայրենիքն է ու հայրենասիրությունը:

Գայանե Կիրակոսյան (կրտսեր դուստրը) - 1992-2017թթ. ծառայել է ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում, ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետը: Շարունակելով հոր մասնագիտությունը և ստանձնելով ոստիկանությունում ծառայելու հերթափոխը՝ նա նույնպես նվիրումով կատարել է իր ծառայողական պարտականությունները: Երկար տարիներ ծառայել է ՀՀ ոստիկանության կադրային քաղաքականության վարչությունում, որտեղից էլ անցել է թոշակի:

Արտակ Կիրակոսյան (որդին)– 1997 թվականից ծառայում է ՀՀ ոստիկանությունում, ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետը: Ներկայումս զբաղեցնում է ՀՀ ոստիկանության ՃՈ ՏՄՀԽ արձանագրման կենտրոնի վարչական իրավախախտումների գործերով իրականացվող վարույթների ապահովման բաժանմունքի ավագ տեսուչի պաշտոնը: Ստանձնելով հոր՝ Անդրանիկ Կիրակոսյանի գործը ՃՈ-ում՝ նա միշտ բարձր է պահել ոստիկանության ծառայողի կոչումը և համազգեստի պատիվը:

Ոստիկանական ընտանեկան դինաստիայի երրորդ սերնդի ներկայացուցիչ է Կարինե Կիրակոսյանի դուստրը՝ ոստիկանության մայոր Լիլիթ Սաֆարյանը: Ավարտելով Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի պարսկերենի բաժինը՝ նա 2010թ. ծառայության է անցնում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության վիզաների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառման բաժնում: Ներկայումս նույն բաժնում զբաղեցնում է ավագ տեսուչի պաշտոնը: Ոստիկանի մասնագիտությունն ընտրելու հարցում նրա համար օրինակ են ծառայել պապիկը և սպա ծնողները: Ծնողների նվիրումը մասնագիտությանը, աշխատասիրությունն ու նպատակասլացությունը նրան ուղղորդել են ոստիկանություն:

Անդրանիկ Կիրակոսյանի զավակները համալրել են ոստիկանության ծառայողների այն շարքերը, որոնք հավատարիմ են երդմանը, նվիրումով և բարեխղճորեն են կատարում իրենց ծառայողական պարտականությունները: Նա զավակների մեջ սերմանել է այնպիսի մարդկային որակներ, ինչպիսին են լավություն անելու, միմիայն լավը տեսնելու և գնահատելու կարողությունը, սկզբունքներից չնահանջելը, կյանքը սեփական օրինակով գնահատելը, հասարակության լիիրավ անդամ ու նվիրյալ դառնալը, իսկ ձեռք բերված գիտելիքներն ու փորձը հանուն հասարակության ծառայեցնելը:

Ահա այսպիսին էր հայի գենը պահող արծվաշենցի միլիցիայի ավագ սերժանտ Անդրանիկ Կիրակոսյանի պատգամն իր զավակներին:

Ռոզա Մուսայելյան
քոլեջի ոստիկանական
միջին մասնագիտական կրթության
ֆակուլտետի լեզուների ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՊԱՏԵՐԱԶՄ

Ապրիլյան արևի շողքերը, ճեղքելով շերտավարագույրները, թափանցում և լույս ու ջերմություն էին հաղորդում կրթահամալիրի լսարաններին: Խաղաղ ու գեղեցիկ էր սկսվում օրը, սակայն ընդամենը երեք տարի առաջ՝ ապրիլի երկուսին, կյանքն այսչափ խաղաղ ու ներդաշնակ չէր: Քառօրյա պատերազմը խախտել էր խաղաղության բոլոր սահմանները:

Հանուն խաղաղության՝ պատերազմի միջով անցած ու կյանքը զոհաբերելու պատրաստ հերոսներից շատերն այսօր սովորում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրում:

Նրանցից մեկը կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի երրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ **Արսեն Ավդալյանն** է: Պատերազմից հետո նա ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Արիության մեդալով»: Նախքան բանակ զորակոչվելն Արսենը խորությամբ ուսումնասիրում էր հայոց պատմությունը, հետաքրքրվում էր նաև կարատե մարտարվեստով: Նա դեռևս դպրոցական տարիներից է նպատակ ունեցել սովորելու ՀՀ ոստիկանության կրթահամալիրում: Անցնելով սերժանտական դասընթաց ՀՀ ՊՆ Լուսակերտի զորամասում՝ տեղափոխվել է Արցախի Մատաղիսի զորամաս, որտեղ ծառայում էր որպես դասակի հրամանատար:

-Վերահաս վտանգը հասկանալուց առաջ ի՞նչ կանխազգացումներ ունեիք:

-Մինչ պատերազմի սկիզբը մենք նկատում էինք հակառակորդի կողմից ստեղծվող լարվածությունը, սակայն չէինք պատկերացնի, որ այն այդչափ կընդլայնվեր: Որպես սերժանտական խորհրդի նախագահ՝ ես ապրիլի մեկի՝ լույս երկուսի գիշերը պատասխանատու էի նշանակվել, իսկ ընկերներս իրականացնում էին իրենց հերթական ծառայությունը: Այդ օրը սովորականի պես էր. ընկերներիցս շատերը հոգում էին որոշ կենցաղային հարցեր՝ հագուստի մաքրում, սննդի պատրաստում և այլն: Կարծես թե սովորական ծառայություն էր, սակայն ներքին անհանգստություն կար մեջս:

- Մահվան շունչը զգալով՝ ի՞նչը դարձավ Ձեզ համար առաջնային:

- Այդ պահին ժամանակ այլևս չի մնում խորհելու: Պարզապես մտածում ես, թե ինչ գործողություններ կարող ես անել, որ առաջինը խոցես հակառակորդին: Պատերազմի ընթացքում ոչ մի ակնթարթ անզորության զգացում չեմ ապրել, այլ կենտրոնացել եմ անելիքներիս վրա:

- Առիթ ունեցե՞լ եք երբևէ երկխոսել պատերազմից առաջ և դրանից հետո Ձեր մեջ ապրող երկու «Արսենների» հետ: Ի՞նչ տարբերություն եք նկատել:

-Կարող եմ ասել, որ ամբողջությամբ եմ փոխվել: Շատ ընկերներ եմ ձեռք բերել պատերազմից հետո: Այդ ժամանակ ինձ զանգահարում էին մարդիկ, ում զանգերին միշտ սպասել եմ... Այդ խառը օրերին նրանք զանգում էին, հայտնում իրենց անհանգստությունը՝ ցուցաբերելով սեր ու հոգատարություն: Պատերազմից հետո ես շատ հարցերի նկատմամբ եմ փոխել վերաբերմունքս: Ամենամեծ փոփոխությունը խաղաղ աշխարհից տեղափոխումն էր դեպի պատերազմ:

-Հավատք ու պատերազմ: Համաձա՞յն եք «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին» պատգամին:

-Բոլորը միաբերան աղոթում էին Աստծուն, որ վտանգի վայրկյանները չխլեն իրենց ու ընկերների կյանքը: Պատգամին, սակայն, համաձայն չեմ: Երբ տեսնում ես, թե այդ նույն թշնամին որքան դաժանորեն է վերաբերվում իր կողմից սպանված զինվորների դիակներին, արդեն անհնար է դառնում նրան սիրելը:

- Որպես հայրենիքին ծառայող՝ ի՞նչ է Ձեզ համար անձնուրացությունը:

-Այդ որակն իմ մեջ զգացել եմ հենց պատերազմի ժամանակ, երբ, իմ անձը մի կողմ դնելով, մտածում էի կողքիններիս մասին:

Պատերազմը մտերմացրել է նաև երկու ծառայակից ընկերներին՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի սովորողներ, ոստիկանության սերժանտ Հմայակ Գալստյանին և ոստիկանության սերժանտ **Սարգիս Մինասյանին**: Քառօրյա պատերազմից հետո Հմայակը ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Արիության մեդալով»:

Դեռևս բանակում ծառայելու տարիներից նրանց մտերմացրել է ՀՀ ոստիկանության կրթահամալիր ընդունվելու նպատակը: Համակուրսեցիները միասին ծառայում էին Արցախի Թալիշի երկրորդ գումարտակում, երբ սկսվեց պատերազմը:

-Ո՞վ է ընկերը խրամատում:

-Մենք հենց պատերազմի սկզբին կորցրինք մեր մյուս ընկերոջը, երբ մեքենայով բարձրանում էինք մարտական դիրքեր: Ամեն ինչ անում էինք, որ փրկենք կյանքը, բայց, ավա՜ղ, չստացվեց, քանի որ գնդակը սրտին էր դիպել: *Սարգիս:*

-Երբ եղավ առաջին կրակոցը, հրաման տրվեց, որ անձնակազմն իջնի մեքենայից: Մեր ծառայակից ընկերներից մեկը հետ էր ընկել, որովհետև փաստաթղթերից մեկը մոռացել էր մեքենայում: Ճանապարհին նա խոցվեց երկրորդ գնդակից: Կրակոցների մեջ նախընտրեցինք օգնել մեր ընկերոջը՝ շատ լավ գիտակցելով, որ այդ գնդակները մեզ էլ կարող են խոցել: *Հմայակ:*

-Հայրենասիրական դաստիարակության կարևորությունը:

-Ինձ դեռ մանկուց սովորեցրել են սիրել հայրենիքը: Հորաքրոջս ամուսինն էլ զոհվել է Արցախյան ազատագրման պայքարի ժամանակ: Հայրենասիրությունը մի ամբողջ աշխարհ արժե: Քառօրյա պատերազմի խառը օրերին նահանջելն ինձ համար բացառվում էր, քանի որ կարևորագույն մի սկզբունք ունեմ. «Լավ է խոցվել առջևից, քան թիկունքից»: *Հմայակ:*

-Ինչպե՞ս կորակեք հակառակորդի զինվորին:

- Ակնհայտ էր, որ մեր երիտասարդ տղաները կռվում էին հողի համար, իսկ հակառակորդը՝ զուտ փողի և ունեցվածքի: Մեր մարտական դիրքերը շատ մոտ էին: Պատերազմից առաջ էլ գրեթե ամեն օր լսում էինք, թե ինչպես են նրանց զինվորները հարբած բղավում ու երգում՝ խախտելով զինվորական կարգը և արհամարելով իրենց հայրենիքի արժեքները: *Հմայակ, եթե երբևէ ունեցել եմ, իհարկե:*

-Ի՞նչ է խաղաղությունը:

-Խաղաղությունն այն է, երբ աչքերդ բացում ես, ու քո մտերիմները կողքիդ են, առողջ և ապահով: *Սարգիս:*

Զրուցեց Անի Ղուկասյանը

ՃԻՃԵՌՆԱԿԱԲԵՐԴ...
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄՈԹԱԼԻ ԷՋԵՐ

Միգուցե և անցյալը թաղում է մեռածներին, եթե մարդասպանների նկատմամբ իրականացվում է արդարադատություն: Սակայն չի կարող անցյալը թաղել իր մեռյալներին, եթե մարդասպանները մնում են անպատիժ, իսկ ոճիրները՝ չդատապարտված, քանի որ չպատժված ոճրագործը մնում է չարիք մարդկության համար, իսկ այդ դեպքում անցյալը կրկնվելու սպառնալիքը դամոկլյան սրի պես կախված է ցանկացած ժողովրդի գլխավերևում:

Ապրիլի 24-ին մարդկային հեղեղը կրկին կհոսի դեպի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու օսմանյան Թուրքիայի կողմից բնաջնջման ենթարկված անմեղ զոհերի հիշատակին:

Հայոց ցեղասպանությունը երբևէ որևէ ժողովրդի դեմ գործած ամենածանր հանցագործությունն է, անախադեպ ոճրագործություն, քանի որ 1915 թվականին Թուրքիայի իթթիհատական կառավարությունը ոչ միայն փորձեց բնաջնջել ամբողջ արևմտահայությանը, այլև ողջերին արտաքսեց բնօրրաններից: Այլ կերպ ասած՝ ամեն միջոց ներդրվեց, որ մեկընդմիշտ վերանա հայն ու Հայաստանը:

Օսմանյան Թուրքիայի ղեկավարության հայաջինջ ծրագիրն իրականացվեց պետական կառույցների կողմից: Կատարվեց մի ոճրագործություն, որ մեր ժողովրդի և մարդկության պատմության մեջ չուներ նախադեպը և անգամ անուն չուներ: Մենք ունեցանք միլիոնավոր զոհեր և հազարամյակների հոգևոր-մշակութային ու նյութական ժառանգության անչափելի կորուստներ:

Ապրիլի 24... Այդ օրը աշխարհի բոլոր հայերը հայրենիքում ու սփյուռքում, մայր հողի վրա և մոլորակի ամենահեռավոր անկյուններում կհիշեն ու կհիշատակեն՝ խոնարհվելով ու ոգեկոչելով, երդվելով ու հավատալով:

Յուրաքանչյուր սերունդ իր ճանապարհն անցնում է՝ անցյալի ու ակունքների բեռն ուսերին, ու փորձում է պատասխաններ գտնել: Փորձում է վերծանել ճշմարտությունը՝ պատմության դասագրքերի խամրած լուսանկարներն ու քողարկված տողատակերը կարդալու ջանքից երկատվելով: Առաջ գնալու համար հետ նայելը որքան դժվար, նույնքան պարտադիր է անցյալ ունեցող ազգի համար: Իսկ մենք անցյալ ունեցող ազգ ենք, և հաճախ այդ անցյալն ավելի ներկա է, քան ներկան ինքը:

Մենք սեփական կենսագրությունը հասկանալու համար սուզվում ենք հազարամյակների խորքերը: Մեր զավակները պատմական ժառանգություն ասելիս պատմական ցավ, պատմական վրիժառություն, պատմական հպարտություն են զգում: Այդպես նրանք հասունանում են: Հավանաբար դա տրվում է ի վերուստ, և այդպես են հասունանում բոլոր հայերը՝ Արարատին նայելով:

Հայրենասիրություն կոչվածը, այնուամենայնիվ, ազգային դիմագիծ ունի և հայերիս համար սկսվում է ցավից, կարոտից, վրեժից և ... Արարատից:

1915 թվական...

Թուրքիայի ողջ տարածքով ծավալվում էր հայերի կոտորածը: Նրանց կողոպտում էին, բռնի ուժով արտաքսում իրենց հայրենիքից և Թուրքիայի բոլոր ճանապարհներով կիզիչ արևի տակ քշում դեպի մահաբեր անապատները:

1915 թվական...

Ապրիլի 24-ին թուրքերը ձեռնամուխ եղան հայերի ցեղասպանության վաղուց ի վեր մշակված իրենց

ոճրագործ քաղաքականության իրագործմանը: Արևմտյան Հայաստանում նրանք գազանային չարությամբ ոչնչացրին ավելի քան մեկ ու կես միլիոն հայերի, ավերեցին հայկական դպրոցներն ու եկեղեցիները, ոչնչացրին հազարավոր պատմական գրքեր, ճարտարապետական հուշարձաններ, այրեցին քաղաքներ, գյուղեր:

Թուրքական յաթաղանից ընկան Գրիգոր Զոհրապն ու Սիամանթոն, Դանիել Վարուժանն ու Ռուբեն Զարդարյանը, արևմտահայ պայծառ մտավորականության բազմաթիվ այլ դեմքեր: Եղեռնի զոհ դարձավ նաև հանճարեղ Կոմիտասը:

Ժամանակը չի կարող վերացնել երիտթուրքերի ոճրագործությունների պատասխանատվությունը պատմության առաջ: Մինչ հուշահամալիրի կառուցելը մենք մեր հոգու, մեր սրտի մեջ էինք կառուցել ցավի կոթողը՝ ի լուր աշխարհի բարձրաձայնելով, որ ոճիրը չունի վաղեմության ժամկետ, ու մեր ցավը չի բթանա, մեր ձայնը չի լռի, քանի դեռ չի վերականգնվել պատմական արդարությունը:

Ճիծեռնակաբերդ... Ցեղասպանության վշտալից հուշարձան: Այստեղ՝ խոնարհված սյունաշարի ներսում, ասես հավերժության քարակոփ ափերի մեջ, բոցկլտում է հիշողության անմար կրակը, և հնչում է հայի հոգուց բխող երաժշտություն:

Ճիծեռնակաբերդ... Երկա՜ր, տխուր ճանապարհ, երկինք խոյացող սյուներ, ծաղիկների բուրգ, հավերժ կրակ, հոսող մարդկային գետ...

Երբն այս անընդհատ է, քանզի լռության որպես սոսկ արարողության ավանդույթ չէ, այլ պահ է ինքնամփոփման, մտորումների, ինքնաճանաչման, մենազրույցի և աշխարհի հետ երկխոսության, քանզի մեր գոյությամբ, ապրելու և արհամարհանքի վիրքերին դիմակայելու մեր անմար կամքով, նահատակների հոգիներին հաղորդակցվելով փաստում ենք՝ կանք ու պիտի լինենք:

Երբն այս անընդհատ է, քանզի արդեն չունի վախ՝ գնալ չհասնելու, քանզի այսօր հիշատակի ամեն մի երթ իր մեջ միշտ կունենա գնալ հասնելու խորհուրդը ...

Հասնել իրականություն դարձած իղձին ու շարունակել՝ հասնելու համար...

Երբն այս անընդհատ է, քանզի անմահ է հիշատակը բոլոր նահատակների, քանզի յուրաքանչյուրս հիշում ենք և պահանջում, պահանջում ենք ճանաչում...

Աննա Սարուխանյան
կադրերի և ԱՀՏԱ բաժնի
ակումբի տեսուչ,
ոստիկանության
ավագ լեյտենանտ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՎ 94 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

2019 թվականի ապրիլի 5-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի անդամները ճանաչողական այց կազմակերպեցին երևանի թիվ 94 ավագ դպրոց: Այցի նպատակն էր ներկայացնել ՀՀ ոստիկանության կրթահամալիրը:

Բացման խոսքով հանդես եկավ ոստիկանության սերժանտ Վազգեն Աղաբեկյանը: Այնուհետև ոստիկանության սերժանտ Սերգեյ Բաղալյանը ներկայացրեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի առանձնահատկությունները, վճարովի և անվճար ուսուցման տարբերությունները, ընդունվելու կարգն ու պայմանները: Աշակերտներին ներկայացվեցին նաև կրթահամալիրում անցկացվող մասնագիտական և մշակութային միջոցառումները, մասնավորապես՝ ժամանակ առ ժամանակ անցկացվող միջբուհական և միջազգային կոնֆերանսները, կլոր-սեղան քննարկումները, տարբեր դատախաղեր և այլն: Աշակերտներն ուսումնասիրեցին կրթահամալիրի հրատարակված գրքերն ու ձեռնարկները:

Վալյա Մարտիրոսյանը ներկայացրեց կրթահամալիրում գործող իրավաբանական կլինիկան, հիմնավորեց դրա անհրաժեշտությունը: Աշակերտները կարևորեցին կլինիկայի առկայությունը, ցանկություն հայտնեցին աջակցել կլինիկայի անդամներին և նրա գործունեությանը տեղում ծանոթանալու համար առաջիկայում այց կազմակերպել ՀՀ ոստիկանության կրթահամալիր:

Այցելության ավարտին ուսանողական խորհրդի անդամները պատասխանեցին դպրոցականների հարցերին, ծանոթացան դպրոցում առկա ավանդույթներին:

Ոստիկանության սերժանտ Ալլա Գևորգյանը դպրոցի տնօրենին հանձնեց կրթահամալիրի կողմից տպագրվող «Պատիվ ունեմ» ամսաթերթը: Ուսանողական խորհրդի անդամները շնորհակալություն հայտնեցին հրավերի համար և համագործակցելու պատրաստակամություն հայտնեցին:

Սերգեյ Բաղալյան
իրավագիտության ֆակուլտետի երրորդ կուրսի
սովորող, ոստիկանության սերժանտ

ԲՈՒՐՄՈՒՆՔՈՎ ԼԻ ՏՈՆ

Դարեր առաջ մեր շատ տոներ նվիրված են եղել հեթանոս շրջանի տարբեր աստվածների: Ծաղկազարդը նույնպես բացառություն չէ: Ասում են, որ տոնը նվիրված է եղել հենց ջրի և անձրևի աստվածուհուն՝ Նարին: Հայերն անձրև կանչելու համար պատրաստում էին կնոջ խրտվիլակ և պտտեցնում փողոցներում: Տիկնիկն ունեցել է Նուրի, Հուրի և այլ անուններ: Ըստ ժողովրդական հավատալիքի՝ եթե Նուրին ամռան տոթ ժամանակ ցողեն ջրով, ապա անձրև կգա: Այդ երևույթը պահպանվել է ժողովրդի մեջ տարբեր անվանումներով: Երաշտի ժամանակ մարդիկ ծիսական երգերի և տիկնիկների ուղեկցությամբ մաղթանքներ են ուղղել Նարիին: Քրիստոնեության ընդունումից հետո տոնը նվիրվեց ոչ միայն ջրին, այլև ծառին և ծաղկունքին: Տոնի հիմքում ընկած է կենաց ծառի գաղափարը: Այն շեշտում է կյանքի վերընթաց զարգացումը՝ ծննդից մինչ ծաղկունք: Բարձրագույն նպատակը անմահությունն է:

Այս տարի հայ առաքելական եկեղեցին Սուրբ Հարության նախորդող օրը՝ ապրիլի 14-ին է նշել Ծաղկազարդը՝ գարնանային տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոնը: Ըստ ավանդույթի՝ այդ օրը Ծաղկազարդին նվիրված պատարագ է մատուցվում: Փողոցում կարելի է տեսնել մարդկանց՝ օրվա խորհրդանիշ ուռենու մատղաշ ճյուղերը ձեռքներին: Առավոտյան կատարվում է ժամերգություն, որից հետո ժողովրդին բաժանվում են օրհնված ճյուղեր, որոնք պահվում են մինչև հաջորդ Ծաղկազարդը: Կարելի է տեսնել տաղավարներ, որտեղ ցուցադրված են տարբեր խաղալիքներ և զարդեր՝ իրենց իսկ ձեռքով պատրաստված:

Հիշում եմ՝ տատիկս պատմում էր, որ աղջիկները սար էին բարձրանում՝ թարմ կանաչիներ հավաքելու: Կանաչին Ծաղկազարդի ուտեստներից մեկն է: Բացի կանաչիներից, սեղաններին դրել են նաև ձու, ձուկ, փլավ, թանով սպաս և այլն:

Տոնին երեխաները երգելով շրջել են տնետուն՝ փոքրիկ պարկերը շալակներին: Նրանք հավկիթներ են հավաքել Զատկի տոնի համար, ձեռքներին ճռճռացող խաղալիքներով շրջել են բակից բակ՝ նպատակ ունենալով չար ուժերին վանել: Պահքի շրջանում նշանադրություններն արգելված են եղել: Միայն այդ օրն է թույլատրվել նշանադրության արարողություն կատարել, բայց պարել են միայն տղամարդիկ: Ծաղկազարդին պարել են վերվերի: Վեր-վեր տեսակի պարաձևի նմուշներից մի քանիսում ձեռքերը բռնում են ուսերից՝ ուս ուսի, թաշկինակներն ամրացրած գոտկատեղից: Այս ուրախ, ցնծալի պարի առաջնորդները կոչվել են վերվերիչներ, որոնք պետք է իրենց բարձր թռչելու արվեստով օրինակ ծառայեին մատաղ սերնդի աճի հմայման հարցում:

Ծաղկազարդի օրը՝ պատարագից հետո, եկեղեցիներում նաև մանուկների օրհնության կարգ է կատարվում: Տոնը բացառիկ է իր գեղեցկությամբ և ջերմությամբ: Այս օրն ազդարարում է, որ բոլորիս սրտերում տիրի սերն ու մաքրությունը: Լցվե՛ք սիրով և եղե՛ք սիրված՝ ներդաշնակ պահելով օրվա խորհուրդը:

Մարիամ Մարկոսյան
ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնի կրտսեր տեսուչ,
ոստիկանության ավագ սերժանտ

ՍԻՐԵ՛Ք ԱՐԵՎԸ, ՍԻՐԵ՛Ք ԿՅԱՆՔԸ, ՍԻՐԵ՛Ք ՁԵԶ ԺՊԻՏ ՊԱՐԳԵՎՈՂԻՆ

Ես կապացուցեի մարդկանց, թե ինչպես են նրանք սխալվում՝ կարծելով, որ ծերանալով այլևս չեն կարող սիրել՝ առանց գիտակցելու, որ նրանք ծերանում են՝ դադարելով սիրել:

Խաղաղ, ձմեռային առավոտ էր, քաղաքը՝ դեռ պարուրված մթով, երբ հեռախոսով՝ ֆեյսբուքում, վերուվար անելիս անընդմեջ կարդում էի Սուրբ Սարգիս և Վալենտին տոների մասին տարիներ շարունակ կրկնվող հոդվածներն ու տոներին նախապատվություն տվող մարդկանց համացանցային պատերազմը. թե որն է ավելի ճիշտ նշել որպես սիրո տոն, որ տոնի ներքո կարելի է սիրել ...

Գրեթե ամբողջ օրն անցկացրի տանը՝ տաղտկալի «սիրային» հոդվածներն ընթերցելով, և երեկոյան տեղեկացա, որ հրավիրված եմ թատրոն:

Վարագույրը բացվեց. ներկայացումն սկսված էր....

«Կյանքիդ ժամերն ապրի՛ր այնպես, որ այդ քաղցր ժամերին ո՛չ քեզ, ո՛չ էլ կողքիդ ապրողներին չդիպչեն ապականությունն ու մահը: Ամենուրեք փնտրի՛ր բարին ու հենց հայտնաբերես, հանի՛ր լույս աշխարհ իր թաքստոցից, թող բարությունը լինի անկաշկանդ ու չամաչի ինքն իրենից:

Մի՛ խաբվիր արտաքին տպավորությամբ, որովհետև դա վայել չէ պայծառատես աչք ու բարի սիրտ ունեցողին: Ոչ մեկին մի՛ ենթարկվիր, բայց և ոչ մեկին էլ քեզ մի՛ ենթարկիր: Հիշի՛ր, որ ամեն մարդ քո նմանակն է: Ամեն մեկի մեղքը նաև քո մեղքն է, և բոլոր անմեղներն իրենց անմեղությունը կիսում են քեզ հետ:

Արհամարհի՛ր չարիքն ու անազնվությունը, բայց ոչ չար ու անազնիվ մարդկանց. հասկացի՛ր սա: Մի՛ ամաչիր բարի ու քնքուշ լինելուց...

Կյանքիդ ժամերն ապրի՛ր այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունես նրա անսահման լույսն ու խորհուրդը:

Ես ամեն ինչ գիտեմ այդ աշխարհի մասին. չարիք ու ժլատություն, ատելություն և վախ, անմաքրություն և փտություն: Թող այդպես լինի, ես սիրում եմ այն, ինչպես որ կա»:

Բեմադրությունը Վիլիամ Սարոյանի խոսքերով էր սկսվում, այն իրական սիրո մասին էր, ինչը ես ամբողջ օրն համացանցում փնտրում և չէի գտնում...

Մի՞թե սիրելու համար պետք է օր, ժամ և առիթ....

Այստեղ ակամայից թատրոնից միանգամից տեղափոխվեցի էքզյուպերիի փոքրիկ աշխարհը, որտեղ «Փոքրիկ իշխան» պատմվածքում հեղինակը խոսում էր իրական կյանքի, իրական սիրո և մարդկանց կույր լինելու մասին:

Արդեն երեկո էր, երբ ներկայացումն ավարտվեց: Քայլում էի Մաշտոցի պողոտա բարձրացող փողոցով:

Ներկայացումից տպավորված՝ սկսեցի ուշադրություն դարձնել անծանոթ մարդկանց դեմքերին, ժեստերին....

Երիտասարդները նվեր են ընտրում սիրելիի համար առանց ժպիտի, առանց զգալու պահը, առանց ցանկության, կարծես ինչ-որ մեկը նրանց ստիպել էր սիրել, մայրերն իրենց երեխաների հարցերին իմիջիայլոց, անտարբեր են պատասխանում, մարդիկ պաղպաղակ են ուտում՝ առանց համն զգալու, կարճ ասած՝ մարդկանց մոլորակում կատարյալ իմիջիայլոց է տիրում ... և սա էլ նրանց սիրո տոնը:

Այո՛, ինչպես ասել է էքզյուպերին. «Մարդիկ կույր են, մարդիկ ճեպընթաց գնացքներ են նստում, բայց իրենք էլ չեն հասկանում, թե ինչ են փնտրում: Դրա համար էլ նրանք հանգիստ չունեն և մեկ այս, մեկ այն կողմ են նետվում: Իզուր, աչքերը կույր են. պետք է փնտրել սրտով:

Սիրո տոնը՝ Սուրբ Սարգիս, թե մարտի ութ, բնավ կարևոր չէ. սիրե՛ք միշտ, սիրե՛ք արևը, սիրե՛ք կյանքը, սիրե՛ք ձեզ ժպիտ պարգևողին, նույնիսկ՝ ուղղակի անծանոթին, որ ժպտում է ձեզ, սիրե՛ք մեր քաղաքը, բանակարանը, հարևանին, շանը, սիրենք ինքներս մեզ և, վերջապես, սիրենք այն շոկոլադե պաղպաղակը, որն այնքան համեղ էր....

Մարիետա Խերանյան
գիտական աշխատանքների բաժնի գիտաշխատող,
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ԼԵՌՆԵՐԸ ՀԱՅՈՑ

Լեռները հայոց շատ են վիրավոր,
Հառաչանք ունեն՝ խորը, դարավոր,
Երբ որ թշնամին՝ կատաղի, դաժան,
Ասպատակել է հողը սրբազան,
Ավերել շեներ, գյուղեր ու տներ,
Մարդիկ ելել են սեգ լեռներն ի վեր
Ու հայոց վսեմ լեռների ծոցում
Պատսպարվել են ինչպես ամրոցում:

Արքուն հայացքով սրատես արծվի
Ճամփան են հսկել ոսոխ-գազանի,
Կռիվ են տվել հողում քարքարոտ,
Որ ցավ է տեսել, վերքեր արյունոտ,
Եվ լեռներն ասես երկաթյա վահան,
Տեր ու տիրակալ, հզոր պահապան,
Ցավի, դավի մեջ մշտապես կանգուն,
Կյանքեր են փրկել՝ բյուրավոր, բազում:

Ամեն հաղթական, դժվարին կռվում
Հայ մարդու սրտում հույսն էր ճառագում,
Որ խաղաղությամբ երկիրը լցվի,
Մութ անձավներից դեպի տուն իջնի,
Կառուցի քանդված օջախը նորից,
Ծուխը բարձրանա իր տան երդիկից,
Ու մեսրոպատառ գրերը կրկին
Ապավեն դառնան Հայոց աշխարհին:

Բայց եղան հերոս, քաջարի մարդիկ,
Ովքեր մնացին լեռներում բարձրիկ,
Երդում տվեցին երկրին և Աստծուն,
Որ չունեն անդորր և ոչ էլ տաք տուն,
Չեն իջնի երբեք լեռներից այնքան,
Մինչև չազատեն հողը սրբազան:

Լեռները՝ հարսիկ, նրանք՝ փեսացու,
Պահապան եղան ընդմիշտ մեկմեկու,
Կռիվ տվեցին հանուն մեր երկրի,
Անուն կնքեցին՝ խիզախ Ֆիդայի,
Ու կյանքի, մահի ահեղ պայքարում
Ընկան հերոսներ՝ քաջ ու անկոտրում,
Դարձան կրակներ, կանթեղ ու աստղեր,
Հարսիկ լեռներին՝ նվիրում ու սեր,
Հավերժ մնացին լեռների սրտում
Որպես երազներ, հուշ ու պատմություն:

Որքան էլ ձոնենք երգեր փառավոր,
Լեռներս հայոց շա՜տ են վիրավոր...

Կարինե Կիրակոսյան
ուսումնամեթոդական զարգացման վարչության պետի տեղակալ, ինքը և ուս. գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի պետ

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՄԱՐԴ ԼԻՆԵԼ ԵՎ ՄՆԱԼ ՄԱՐԴ

Կրթություն, ընտանիք, շրջապատ, աշխատանք...

Ի՞նչ եք կարծում, թվարկածներից ո՞րն է առավել կարևոր: Ոմանք կասեն կրթությունը, քանի որ ամբողջ կյանքում դա է որոշելու, թե ինչ ուղով գնաս, շատերն էլ կպնդեն, որ ամենակարևորն ընտանիքն է: Չեմ հերքի. դու պատասխանատու ես ընտանիքիդ առաջ և ընտանիքիդ համար, հատկապես՝ երբ բոլորի հույսը դու ես: Բայց այդ բոլորի հիմքում կա թերևս ամենապատասխանատու ու ամենաբարդ արժեքը, որը, ցավոք, ոչ բոլորն են արժևորում:

Հարգելինե՛րս, այս կյանքում ու այս աշխարհում մարդ լինելն ու մարդ մնալը եղել է, կա ու կլինի ամենաթանկ ու բարձր արժեքը: Դու պատասխանատու ես քո յուրաքանչյուր քայլի, արածի ու չարածի, ասված ու չասված խոսքերի համար: Իհարկե, կա հասարակության մի ստվար զանգված, ով, չունենալով պատասխանատվության նույնիսկ մեկ «կաթիլ», իր յուրաքանչյուր սխալ արարքի համար փնտրում է ցանկացած բացատրություն, միայն թե արդարացնի իրեն կամ, որ ավելի տհաճ է, փնտրում է մեղավորներ, բայց չի ընդունում, որ սխալն իրենն է:

Մարդ լինելու ու մարդ տեսակդ պահպանելու համար ամենից առաջ Բարձրյալի առաջ ես պատասխանատու: Պատասխան պիտի տաս նաև քո սերունդների համար, նրանց տված դաստիարակությանդ ու փոխանցածդ մարդկային արժեքների համար, իսկ թե այդ արժեքները բարձր կլինեն, թե ցածր, որոշողն ու ձևավորողը կլինես դու:

Այո՛, ամբողջ կյանքդ կառուցվում է պատասխանատվության վրա:

Դու պատասխանատու ես այն ամենի համար, ինչ որ կա քո կյանքում, այն մարդկանց համար, որոնք քո շրջապատում են, այն ընտանիքի համար, որում ծնվել ես և այն ընտանիքի համար, որն ինքդ ես ստեղծել: Եվ վերջապես, պատասխանատու ես դեռևս չծնված այն երեխաների համար, որոնք կլինեն քո ընտանիքի հայելին՝ իրենց բոլոր շողացող բյուրեղիկներով, որոնք կունենան ծնողներից ժառանգած պատասխանատվության մեծ զգացում, և որոնց անձի կերտման ու ձևավորման համար պիտի արժանանաս հասարակության դրվատանքին:

Սոնա Ղուկասյան
ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի 2-րդ կուրսի սովորող,
ոստիկանության սերժանտ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 29. 04. 2019թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: